**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԲՋՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-87

---

Բջնի, Հեռ. (0223) 6-25-21

24 հոկտեմբեր 2011թ.

## ԲՋՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱԽԱՆՈՒԹԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՐԱԶԴԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ-ի թիվ 1626-Ն որոշումը, Կոտայքի մարզի Բջնի համայնքի ավագանու 2011թ-ի հոկտեմբերի 14-ի թիվ 49 որոշումը և Հրազդանի տարածքային սպառողական կոոպերատիվի գրությունը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կոտայքի մարզի Բջնի համայնքի վարչական տարածքում գտնվող Հանրախանութի շենքի զբաղեցրած հողատարածքը /340քառ.մ/ տրամադրել Հրազդանի տարածքային սպառողական կոոպերատիվին՝ հանրախանութի շենքի պահպանման և սպասարկման նպատակով, համաձայն կից ներկայացվող հատակագծի:

2. Նշված հողամասը չի դասվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ